ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 4 *Общественные науки*

Պ. Հարությունյան

ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՃՅՈՒՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Ղ. Ալիշանը[1] և Մարկվարտը[2] Բագրատունյաց ճյուղագրական տախտակները կազմել են հիմքում (բուներ) գնելով Մանվել Բագրատունուն և վերջինիս որդին համարել են Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունի Խոսրով-Շումին։ Ն. Ակինյանը[3] փորձում է Բագրատունյաց ճյուղագրությունն ավելի առաջ տանել և մի կապակցված շղթայի մեջ գնել (հորից որդի՝ նաև նախորդ՝ 4—5-րդ դարերի Բագրատունիներին։ Բայց քանի որ մինչև 6-րդ դարի վերջերը եղած Բագրատունիների մասին աղբյուրների վկայությունները խառն են ու կցկտուր, նա ևս իր կազմած ճյուղագրական տոհմածառը հիմնականում սկսում է 6-րդ դարի վերջերից՝ միայն թե ի տարբերություն նախորդների Սեն-Մարտենի, Ղ. Ալիշանի, Մարկվարտի), նա Վրկանի Մարզպանին համարում է ոչ թե Մանվել Բագրատունու որդին, այլ՝ Պապ Բագրատունու որդին։

Բագրատունյաց ճյուղագրության վերաբերյալ առաջ եկած տարաձայնությունները արդյունք են ոչ միայն աղբյուրների հակասական տեղեկությունների, այլև այն բանի, որ 6-րդ դարի 2-րդ կեսից սկսած նկատելի է դառնում Բագրատունիների զորացումը Հայաստանում։ Հատկապես Վրկանի Մարզպան Սմբատ Բագրատունու ժամանակ է, որ Բագրատունիները՝ հասնելով տնտեսական և քաղաքական ուժեղ դիրքի, ձգտում են Հայաստանում՝ Արշակունիներից հետո, հիմնել մի նոր ինքնուրույն թագավորություն (որին նրանք հասան միայն 9-րդ դարի 2-րդ կեսին)։ Պատմաբանների ու բանասիրների տարաձայնություններն ամենից շատ վերաբերում են Վրկանի Մարզպան Սմբատ Բագրատունուն, որը փաստորեն հանդիսանում է հետագայում հզորացող, և Հայաստանում թագավորող Բագրատունիների նախահայրը։

Այս պատճառով էլ, միանգամայն իրավացի են այն պատմաբանները, որոնք Բագրատունյաց ճյուղագրությունը քննության են առնում 6-րդ դարի վերջերից սկսած։

Պրոֆ. Ք. Պատկանյանը[4] և ակադ. Ստ. Մալխասյանը[5] գտնում են, որ այս ժամանակաշրջանում Հայաստանում գործում էին երկու Սմբատ Բագրատունիներ, որոնցից՝ Մանվելի որդին գտնվում էր բյուզանդական ծառայության մեջ, և զավագրության մեջ ընկնելով, աքսորվեց Աֆրիկա, իսկ մյուսը գտնվում էր պարսկական ծառայության մեջ, և իր տարած հաղթանակների շնորհիվ դառնալով Խոսրով 2-րդի սիրելի զորավարներից մեկը, նշանակվեց Վրկանի Մարզպան և կոչվեց Խոսրով-Շում։

---

[1] *Ղ. Ալիշան — Շիրակ։*
[2] *Մարկվարտ — «Վրկան Բագրատունյանց ծագումը» («Հանդէս Ամսօրեայ», 1918 թ.)։*
[3] *Ն. Ակինյան — «Հայ Բագրատունիներու տոհմածառը» («Հանդէս Ամսօրեայ» 1930 թ.)։*
[4] Себеос. История императора Иракла, СПБ 1862, пр. 137.
[5] История Себеоса епископа, Ереван. 1939 г., стр. 161, пр. 105.

Ահա այս վերջին Սմբատի ժամանակ է, որ սկսվում է Բագրատունիների վերելքը. նա է, որ հանդիսանում է իր տոհմակիցների տնտեսական և քաղաքական բարձրացման հիմնադիրը։ Հ. Մարկվարտը հակառակ այս կարծիքի, գտնում է, որ այդ ժամանակ Հայաստանում կար մեկ Սմբատ Բագրատունի՝ այն է Մանվելի որդին, որը Աֆրիկա աքսորվելուց հետո, փախչում է Պարսկաստան (թե երբ և ինչպես, ցույց չի տրվում) և դառնում Խոսրով 2-րդի սիրելի զորավարը։ Իսկ Ն. Ակինյանը, ինչպես վերևում ասվեց, հակառակ այս կարծիքների, գտնում է, որ Վրկանի Մարզպան Սմբատ Բագրատունին հանդիսանում է Պապ Բագրատունու որդին («կարող է համարվել նաև Աշոտի կրտսեր որդին»)։[1]

Պատմական դեպքերի և փաստերի, ինչպես և աղբյուրների, հատկապես Սեբեոսի վկայությունների մանրամասն քննությունները մեզ բերում են այն համոզման, որ իրոք այդ ժամանակ Հայաստանում գործում էին երկու Սմբատ Բագրատունիներ, որոնցից՝ Մանվելի որդին աքսորվում է Աֆրիկա, իսկ մյուսը՝ Պարսկաստանում ստանալով պետական բարձր պաշտոններ ու պատիվներ, նշանակվում է Վրկանի Մարզպան։ Այս Վրկանի Մարզպան Սմբատ Բագրատունին ոչ Մանվելի որդին է (ինչպես գտնում են Մարկվարտը և ուրիշները)[2] և ոչ էլ Պապ Բագրատունու որդին է (ինչպես կարծում է Ն. Ակինյանը), այլ՝ նույն ինքը Պապ Բագրատունին է (որը պատմագրության մեջ հիշվում է երկու անունով— Պապ և Սմբատ), հետևապես, Աշոտ Ասպետի որդին է։ Այս նոր կարծիքը, որ փոփոխության է ենթարկում Բագրատունյաց ճյուղագրական տախտակը (տոհմածառը), ապացուցելու համար, քննության ենք առնում աղբյուրների, հատկապես Սեբեոսի վկայությունները, երկու Սմբատների վերաբերյալ։

Բյուզանդական Մորիկ կայսեր օգնությամբ 591 թվին Պարսկաստանում գահ է բարձրանում Խոսրով 2-րդը։ Վերջինս Բյուզանդիային է զիջում Մարզպանական Հայաստանի մեծ մասը։ Մորիկ կայսրն արևելքում, հանձին Խոսրով 2-րդի ունենալով «հավատարիմ» բարեկամ և ամրացնելով իր թիկունքը, սկսում է պատերազմական գործողություններ վարել Թրակիայում։ Նա այս կապակցությամբ սկսում է զորահավաք կատարել Հայաստանում և իր իշխանության տակ գտնվող հայ իշխաններին՝ իրենց զորքով ուղարկել Թրակիա։ Հայերը, դժգոհ մնալով Մորիկի այս քաղաքականությունից, սկսում են խռովություններ և ապստամբություններ կազմակերպել ընդդեմ Բյուզանդիայի։ Այն ժամանակ Մորիկը դիմում է Խոսրով 2-րդին մի գրությամբ, որի բովանդակությունը բերում է Սեբեոսը. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ՝ ասէ, ես զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել։ Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք կեցցուք խաղաղութեամբ։ Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեզ հանգչել ոչ լինի»։

Սեբեոսի վկայությամբ, երբ Մորիկն սկսում է հայերին հավաքել Թրա-

[1] «Հանդէս Ամսօրեայ» 1930 թ., էջ 640։

[2] Հ. Ջանփոլադյան—«Խոսրով Շումը Մանվելի որդի Սմբատ Բագրատունին է» (Տեղեկագիր ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի, 1943 թ. № 8, էջ 49—56)։

Պատմութիւն Սեբէոսի Եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913 թ., էջ 75։

կիա ուղարկելու համար, հայ իշխաններից ոմանք փախչում և անցնում են Պարսկաստան։

Խոսրով Շ-րդը նրանց ընդունում և սկսում է սիրաշահել։ «Իսկ նա զամենեսեան ընդունէր մեծարանաւք եւ մեծամեծ պարգևս քան զկայսր պարգևէր նոցա... եւս առաւել մեծապէս սիրով կամէր կորզել առ ինքն»[1] Արևմտյան-Բյուզանդական Հայաստանից դեպի Պարսկա-Հայաստան փախչող իշխաններն էին՝ Սամվել Վահևունին, Ատատ Խորխոռունին, Մամակ Մամիկոնյանը, Ստեփանոս Սյունին, Կոտիտ Ամատունին և Թեոդոս (Թեոդորոս) Տրպատունին, որոնք իրենց հետ ունեին երկու հազար հեծյալներ։ Ինչպես երևում է, նրանք նպատակ են դնում պայքարել բյուզանդական կայսրի ու պարսից արքայի դեմ. «բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուսցուք»,— գրում է նրանց մտադրության մասին Սեբեոսը։ Սակայն Նախիջևան հասնելուց հետո նրանց միջև պառակտում է առաջանում. «քակտեցան խորհուրդք միաբանութեան. ոչ հաւատալով միմեանց»։ Երբ նրանց շրջապատում են մի կողմից պարսից և մյուս կողմից՝ բյուզանդական զորքերը, և առաջարկում են հնազանդվել, այն ժամանակ Մամակ Մամիկոնյանը, Կոտիտ Ամատունին և Ստեփանոս Սյունին իրենց համախոհներով անցնում են պարսիկների կողմը և հայտնում իրենց հնազանդությունը։[2] Իսկ Ատատ Խորխոռունին և Սամվել Վահևունին իրենց զորքով փախչում են Աղվանից աշխարհը և Կուր գետի մյուս ափին բանակ դնում։[3] Այստեղ նրանք, երկյուղ կրելով հոներից, սկսում են բանակցություններ վարել իրենց հետապնդող բյուզանդացիների հետ, և ընդունելով նրանց պայմանները, վերադառնում են Բյուզանդիա։ Կայսրն Ատատ Խորխոռունուն իր զորքով ուղարկում է Թրակիա։[5] Սամվել Վահևունին, Թեոդորոս Տրպատունին ե նրանց ազգակից ու համախոհ իշխանները նորից են ապստամբում Բյուզանդիայի դեմ. բայց պարտվելով,[6] ենթարկվում են գլխատման։ Թրակիայի կողմերում առաջացած սպառնալիքը վերացնելու համար, Մորիկը հրամայում է Հայաստանում կատարել նոր զորահավաք և ուղարկել Թրակիա։ Նա Թրակիա է ուղարկում հայ իշխաններին ու զորքը, Մուշեղ Մամիկոնյանի ղեկավարությամբ։ Մուշեղ Մամիկոնյանն այնտեղ զոհվում է։[7] Մորիկը 3-րդ անգամ է պահանջում, որ Հայաստանից զորք ուղարկեն։ Հավաքում են 2000 հեծյալ, որոնց գլուխ կանգնում են Սահակ Մամիկոնյանը և Մանվելի որդի Սմբատ Բագրատունին. «Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս բռ սպառազէնս եւ ետուն յերկուս արս հաւատարիմս։ Մի հազար ցՍահակ Մամիկոնեան. եւ մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրատունւոյ որդւոյ Մանուէլի։[8] Սահակ Մամիկոնյանն իրեն հանձնված մի հազարյակ զորքով գնում է Սեբաստիա, և այնտեղից անցնում Բյուզանդիա։ Իսկ Մանվելի որդի Սմբատ Բագրատունին՝ իր հազարյակով գնում է Խաղտյաց կողմերը։[9] Այստեղ նա սկսում է տատանվել, որոշում է չգնալ

[1] Պատմութիւն Սեբէոսի Եպիսկոպոսի ի հերակլն. Թիֆլիս, 1913 թ., էջ 76։
[2] Նույն տեղում, էջ 77։
[3] Նույն տեղում, էջ 78։
[4] Նույն տեղում։
[5] Նույն տեղում, էջ 79։
[6] Նույն տեղում, էջ 79—80։
[7] Նույն տեղում, էջ 83—83։
[8] Նույն տեղում, էջ 85։
[9] Նույն տեղում։

Բյուզանդիա։ Սակայն նրան համոզում են ներկայանալ կայսրին։ Երբ Սմբատը իր զորքով ներկայանում է, կայսրն այդ զորքն ուղարկում է Թրակիա։ Իսկ Սմբատին հնարավորություն է տալիս վերադառնալ Հայաստան։[1] Հայաստանում նախարարները նորից փորձում են միաբանել և թոթափել բյուզանդական լուծը։ Նրանք մտածում են՝ քանի որ իրենք կայսրի կողմից ուղարկվում են Թրակիա պատերազմելու և մեռնելու, ավելի լավ է պատերազմել և մեռնել հանուն իրենց անկախության։ Նրանք մտադրվում են ապստամբել Բյուզանդիայի դեմ. ձեռք բերել անկախություն և հիմնել ինքնուրույն թագավորություն— «Ապա դարձեալ սկսան միաբանել մնացեալ նախարարքն Հայոց, եւ խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն յունաց թագաւորին. եւ նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի՛ և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանիլ ի վերայ աշխարհին իւրեանց»։- Բայց իշխանները չեն միաբանում և նրանց այս մտադրությունը շուտով հայտնի է դառնում կայսրին։ Հավանական է, որ Հայաստանում ինքնուրույն թագավորություն հիմնելու նպատակով կազմակերպվող այս նոր ապստամբության առաջնորդն ու ղեկավարը եղել է Մանվելի որդի Սմբատ Բագրատունին, որը, ինչպես վերևում ասվեց, չէր ցանկանում իրեն հանձնարարված զորքը տանել Բյուզանդիա։ Հայ իշխանների այս մտադրությունը հայտնի է դառնում կայսրին, նրա հրամանով կալանավորվում է Սմբատ Բագրատունին (Մանվելի որդին) յոթ այլ իշխանների հետ (որոնց անունները պատմագիրը չի հիշատակում), և ուղարկվում Բյուզանդիա, հրապարակային դատի ենթարկվում։

Ահա թե ինչ է ասում Սեբեոսը Մանվելի որդի Սմբատ Բագրատունու մասին— «Եւ քննեալ զնոսա (Սմբատ Բգր. և 7 իշխաններ) ի մէջ բազմամբոխ հրապարակին, հատաւ (կայսրը) վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և բնկենով ի կիւնիկն։ Եւ էր սա (Սմբատ Բգր.) այր անհեթեթ անձամբ եւ գեղեցիկ տեսլեամբ. եւ բարձր եւ լայն հասակաւ. եւ բուռն եւ ցամաք մարմնով։ Յայնժամ հզաւր և պատերազմող որ ի բազում պատերազմուսս ցուցեալ էր զիւր քաջութիւնն եւ դրոնութիւն։ Այս է գաւրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրեաց եւ զաւրաւոր ծառոց՝ ի վերայ յաղթանդամ եւ հզաւր երիվարին, եւ յարձակեալ զոստով ծառոյն բուռն հարկանէր եւ կծկեալ ուժգին երանաւրն եւ ուտիւք զմէջ երիվարին վերացուցանէր երանաւրն ի գետնոյն. մինչ զի ամենայն գաւրացն տեսեալ ահաբեկ լինէին ի դարմացմանէ»։

Սրանով չեն վերջանում Սմբատի քաջագործությունները կրկեսում. նրա վրա բաց են թողնում արջ, որին սպանում է բռունցքի մի հարվածով, ապա բաց են թողնում ցուլ, որին ևս հաղթում է, հետո բաց են թողնում առյուծ, որին սպանում է։ Այս բոլորից հետո՝ նա արժանանում է Ներման։[4] Կայսրը նրան ներելով, որոշում է, ոչ թե ուղարկել Հայաստան, այլ աքսորել Աֆրիկա— «Եւ զկնի սուղ ինչ անցելոց, մանաւանդ եթէ՝ ոչ ի չար ինչ կամաց թագաւորին, այլ ի նախանձորդաց չարախօսութենէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ եւ աքսորել ի կղզիս Հեռաւորս։ Եւ ապա անտի հրամայէ անցուցանել յԱֆ-

[1] Նույն տեղում. էջ 86։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում. էջ 87։
[4] Նույն տեղում. էջ 88։

րիկէ, եւ առնել նոցա անդ ի մէջ նոցա, եւ առնել զնա անդ ի մէջ գաւ-
րացն՝ որ էին անդ ի բուն»։

Ահա այստեղ էլ վերջանում են Սեբեոսի վկայությունները Մանվելի որդի Սմբատ Բագրատունու մասին։ Անհայտ է մնում, թե նա իր յոթ ընկերներով որքան մնաց հեռավոր կղզիներում և կամ, երբ տեղափոխվեց Աֆրիկա։ Հիշատակություն չկա նաև այն մասին, թե նրանք Աֆրիկայից վերադարձե՞լ են, թե ոչ։

Այս բոլորը պատմելուց հետո, Սեբեոսը պատմում է նաև պարսից պալատում հանդես եկող Սմբատ Բագրատունու մասին։ Պատմաբանների և բանասերների մի մասը ենթադրում են, թե դա դարձյալ նույն Սմբատն է (այսինքն Մանվելի որդին), որը հանկարծ հանդես է գալիս Պարսից պալատում։ Այդպես կարծելու կամ ենթադրելու հիմք չկա, քանի որ աղբյուրներում որևէ վկայություն չկա, թե Մանվելի որդի Սմբատը Աֆրիկայից վերադարձել է, թե ոչ։ Մանվելի որդի Սմբատ Բագրատունին որքան վտանգավոր էր Բյուզանդիայի համար, նույնքան էլ վտանգավոր պիտի լիներ Պարսկաստանի համար։ Նա՝ ի տարբերություն մյուս նախարարական դավադրությունների, իր համախոհների հետ մտադրվում է Հայաստանում հիմնել ինքնուրույն թագավորություն, իսկ դա այնպիսի մի գործ էր, որ հավասարապես հարվածում էր թե Բյուզանդիային և թե՛ Պարսկաստանին։

Մանվելի որդի Սմբատ Բագրատունին մնում է Աֆրիկայում։ Միանգամայն անհավանական է Մարկվարտի ենթադրությունը, թե «հետևելով հայ մյուս իշխանների օրինակին, կայսրահպատակ Բագրատունին փախչում է աքսորից և ապավինում պարսկական արքունիքում, դառնում է Խոսրով Բ-ի սիրելի զորավարը»։ Աղբյուրներում չի հիշատակվում Մանվելի որդի Սմբատի, կամ նրա հետ աքսորված իշխաններից որևէ մեկի փախուստը Աֆրիկայից։ Երկրորդ, ոչ թե նա էր հետևելու «հայ մյուս իշխանների օրինակին» (որոնց մասին վկայություն չկա, թե այդ որ իշխաններն էին), այլ, այդ «մյուս իշխաններն» էին, որ պետք է հետևեին նրա օրինակին, քանի որ նա հանդիսանում էր նրանց առաջնորդն ու ղեկավարը։ Երրորդ, եթե նա, կամ նրա հետ աքսորված իշխաններից որևէ մեկը փախուստի փորձ կատարած լիներ, անկարելի է, որ այդ փաստը մոռանար արձանագրել Սեբեոսը, որն այնքան խնամքով և ուշադիր կերպով արձանագրում է այդ ժամանակաշրջանին և իշխաններին վերաբերող դեպքերը։ Այսպես, օրինակ՝ Սեբեոսն ամենայն մանրամասնությամբ պատմում է — Ատատ Խորխոռունու նոր փախուստը Բյուզանդիայից (Մորիկը Ատատ Խորխոռունուն հրամայում է գնալ Թրակիա, իսկ նա որոշում է փախչել Պարսից թագավորի մոտ)։[1] Իսկ երբ սպանվում է Մորիկ կայսրը, Ատատ Խորխոռունին որոշում է ապստամբել պարսիկների դեմ և գնալ Բյուզանդիա։[2]

Ատատ Խորխոռունու մասին այդքան մանրամասն պատմող պատմագիրը չէր կարող մոռանալ կամ անտեսել իր կողմից այդքան առասպելական գույներով ներկարարված Մանվելի որդի Սմբատ Բագրատունու փախուստը։

Իսկ ո՞վ էր պարսից պալատում հանդես եկող և Վրկանի մարզպան նշա-

[1] Նույն տեղում, էջ 89։
[2] Նույն տեղում, էջ 111։
[3] Նույն տեղում։

նակված Սմբատ Բագրատունին։ Այս հարցի լուծման համար, դարձյալ պետք է քննության առնել Սեբեոսի վկայությունները և հանգել ճիշտ եզրակացության։

* *

Պետք է նկատել, որ Հայաստանի բաժանումից հետո, եղել են հայ իշխանական տներ, որոնց անդամների մի մասը գտնվել է բյուզանդական ծառայության մեջ, իսկ մյուս մասը՝ պարսկական։ Այսպես, օրինակ՝ Մամիկոնյաններից— Սահակ, Համազասպ, Մուշեղ Մամիկոնյանները ծառայում էին Բյուզանդիային,[1] իսկ Գագիկ, Մամակ Մամիկոնյանները՝ Պարսկաստանին։[2] Նույնը նկատվում է նաև Բագրատունիների մոտ, որոնցից Մանվելի որդի Սմբատ Բագրատունին գտնվում էր բյուզանդական ծառայության մեջ (և աքսորվեց Աֆրիկա), իսկ այլ Բագրատունիներ,— ինչպես Աշոտ Ասպետը և նրա որդին՝ գտնվում էին պարսկական ծառայության մեջ։ Այս երևույթը բացատրվում է նրանով, որ միևնույն նախարարական տան անդամներից ոմանց կալվածքները գտնվում էին Պարսկական մասում, իսկ մյուսները՝ Բյուզանդական մասում։ Ահա այդ պարսից գերիշխանության տակ գտնվող Բագրատունիներից էր այն հայտնի զորավարը, Սմբատ Բագրատունին, որը պարսից արքայի դահլիճում արժանացավ 3-րդ գահին և նշանակվեց Վրկանի մարզպան ու կոչվեց Խոսրով-Շում։

Սեբեոսն իր Պատմության 10-րդ գլխում խոսելով Բյուզանդական Հայաստանում գտնվող իշխանների, և սրանց թվում նաև Մանվելի որդի Սմբատ Բագրատունու մասին, և հիշատակելով վերջինիս Աֆրիկա աքսորվելը, դրանով վերջացնում է այդ գլխում եղած պատմությունը։ Հետևյալ 11-րդ գլուխը նա անմիջապես նվիրում է պարսից գերիշխանության տակ գտնվող հայ իշխաններին։

Սեբեոսի պատմության 11-րդ գլուխն ունի հետևյալ վերնագիրը— «Կոչիլ յԱսորեստան եւ պատուիլ յարքայէն Խոսրովայ այնց նախարարաց, զոր Համարակարն եթող, եւ զօրաց նոցա նստիլ յԱսպահան»։

Ո՞վքեր էին այդ իշխանները— «զոր Համարակարն եթող»— և որոնց զորքը նստում էր Սպահանում։— Դրանք 6-րդ գլխում հիշատակված այն հայ իշխաններն էին /Ատատ Խորխորունի, Սամվել Վահևունի, Մամակ Մամիկոնյան, Ստեփանոս Սյունի, Կոտիտ Ամատունի, Թեոդոս Տրպատունի «եւ հեծեալք իբրեւ երկու հազարք», որոնք մտադրվելով ապստամբել Բյուզանդիայի դեմ, փախչելով բանակ էին դրել Նախիջևանում։ Սակայն այդ իշխանները պառակտվում են միմյանցից. մի մասն անցնում է պարսիկների կողմը (Մամակ Մամիկոնյան, Կոտիտ Ամատունի, Ատեփանոս Սյունի և այլն)։

Պարսկաստանի կողմն անցած այդ իշխաններին միանում են նաև այլ իշխաններ, որոնք «ժողովեալ Համարակարին զամենայն իշխանս եւ զզուարս Հայոց, որ ի պարսից կողմանէ ողոքաւ եւ եւս քաղցր բանիւք յորդորեալ զամենեսեանսն միաբանեաց, արար գունդս գունդս։ Եթող անդրէն յաշխարհին սակաւուք՝ եւ դնաց. «մինչեւ ես ծանուցից՝ ասէ, վասն ձեր, եւ հասցէ անտի

[1] Նույն տեղում, էջ 80, 82—83 և այլն։
[2] Նույն տեղում, էջ 78, 90, 92։
[3] Նույն տեղում, էջ 89։

հրաման դադարել անդ»։ Զի զմտաւ իսկ ածեալ է նորա եւ զայլոց դալն առ նոսա, եւ զբազմանալն»։

Ահա այդ իշխանների (և նոր եկող, նրանց միացող իշխանների) մասին է, որ Սեբեոսը պատմում է 11-րդ գլխում։ Նա այստեղ, այս անգամ ավելի մանրամասն է խոսում այդ իշխանների մասին— «Իսկ որ ի պարսից կողմանէ էին նախարարքն և զաւրք, զորմէ վերագոյն ասացի՝ եթէ եթող համարակարն եւ գնաց. թե մինչեւ հասցէ հրամանն արքունի»։[2] Նա հայտնում է այդ իշխանների անունները— «Յայնժամ եկին հասին պէշասպիք հրովարտակաւք կոչել զնոսա միաբանութեամբ ի դուռն արքունի։ Եւ այսոքիկ են նախարարք եւ զաւրք՝ որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր գնդովք եւ սրա դրաւշու ի դուռն թագաւորին պարսից Խոսրովու՝ յամի վեցերորդի թագաւորութեան նորա։ Առաջին՝ Դագիկ Մամիկոնեան որդի Մանուելի։ Երկրորդն՝ Պապ Բադրատունի որդի Աշոտայ ասպետի։ Երրորդն՝ Խոսրով Վահեւունեաց տէր։ Չորրորդն՝ Վարդան Արծրունի։ Հինգերորդն՝ Սմակ Մամիկոնեան։ Վեցերորդն՝ Ստեփաննոս Սիւնի։ Եւթներորդն՝ Կոտիտ Ամատունեաց տէր։ Եւ այլք ընդ նոսա ի նախարարաց։ Եւ հասեալ նոցա յԱսորեստան ի տեղի արքունական տանն եւ յանդիման եղեն թագաւորին։ Իսկ նա խնդութեամբ ընկալաւ զնոսա, եւ երեւելի շքեղութեամբ մեծացոյց պատուովք. եւ զմեծամեծ իշխանսն հրամայէ պահել ի դրանն արքունի, կարգել նոցա ռոճիկս յարքունուստ տալ ի տունս իւրաքանչիւր, եւ կոչել յամենայն աւուր յընթրիս արքունի։ Եւ զաւրաց նոցա հրաման տայր նստիլ ի Սպահան աշխարհի, եւ դարմանել զնոսա սիրով եւ ամենայն կամակարութեամբ»։[3] Ուրեմն, այս հայ իշխանները պարսից պալատ են գնում Խոսրով երկրորդի թագավորության 6-րդ տարին, այսինքն՝ 596—97 թվին, նշանակում է, այդ տարում էլ եղել է հայ իշխանների ապրստամբությունն ընդդեմ Բյուզանդիայի։[4]

Խոսրով 2-րդը հայոց «մեծամեծ իշխաններին» պահելով արքունիքում, իսկ նրանց զորքը՝ Սպահանում, հրամայում է հոգ տանել այդ զորքի մասին և բավարարել նրանց պահանջները։ Նա այդ կատարում էր որոշ նպատակով։ Այդ նպատակը հայտնի է դառնում Սեբեոսի Պատմության 12-րդ գլխում, որտեղ նա խոսում է Խոսրով 2-րդի կռիվների մասին Վնդոյի և Վստամի դեմ։ Այդ կռիվները կատարվել են 597—600 թվերին. կռիվներին մասնակցել են նաև այդ հայ իշխաններն ու նրանց զորքը— «Եւ յայնմ պատերազմի ոչ փոքր ինչ քաջութիւն գործեալ հայակոյտ զաւրացն. զոր տեսեալ թագաւորն առաւել զարմանայր»։[5] Խոսրով 2-րդը առանց լուրջ արդյունքի հասնելու Վրստամի դեմ վարած պատերազմում, վերադառնում է Ասորեստան. նրա հետ վերադառնում են նաև հայ իշխանները— «Եւ թագաւորին չու արարեալ յԱսորեստան՝ հասանէր ի բուն կայանս իւրոյ արքունականս, եւ իշխանք նախարարացն Հայոց ընդ նմա»։[6]

13-րդ գլխում Սեբեոսը պատմում է Պապ Բագրատունու հետ պարսից պալատում գտնվող հայ իշխանների մահը։ Նա հայտնում է, որ Դագիկ Մա-

[1] Սեբեոս, էջ 78—79։
[2] Նույն տեղում, էջ 89։
[3] Նույն տեղում, էջ 89—90։
[4] Այս հատվածից կարելի է հետևցնել (թեև ուղղակի ցուցում չկա), որ Մանվելի որդի Սմբատ Բագրատունին Աֆրիկա աքսորվել է մոտավորապես նույն տարիներին։
[5] Սեբեոս, էջ 91։
[6] Նույն տեղում, էջ 92։

միկոնյաներ և Խոսրով Վահևունին մահացան իրենց մահով՝ պարսից պալատում։ Մաման Մամիկոնյանը, որ գալիս է Հայաստան զորք տանելու, մահանում է Դվինում, Ստեփանոս Սյունին՝ Սյունյաց տանուտերությունը գրավելու համար, սկսում է ընդհարվել իր հորեղբայր Սահակի հետ։ Սահակը և մյուս հայ իշխանները բողոքում են Խոսրով 2-րդին՝ Ստեփանոս Սյունիի դեմ։ Խոսրով 2-րդը հրամայում է կապոտել Ստեփանոս Սյունուն, դնել բանտ և հետո՝ գլխատել։ Իսկ Կոտիտ Ամատունին սպանվում է ճանապարհին։ Այս իշխանների զորքը, որ գտնվում էր Սպահանում, ապստամբում և գնում է Գիլան, այնտեղից անցնում Պարթևաց կողմերը՝ Վստամին միանալու համար։[1] Իսկ թի ի՞նչ եղավ Պապ Բագրատունին, Սեբեոսը ոչինչ չի ասում։ Նա խոսելով բոլոր հայ իշխանների մասին և կրկին անգամ հիշելով նրանց, լռության է մատնում Պապ Բագրատունուն։ Լինելով Բագրատունյաց եպիսկոպոս, Սեբեոսը հազիվ թե մոռանար կամ անտեսեր պարսից պալատում հանդես եկած մեծամեծ իշխանների» մեջ թվով երկրորդը հիշատակվող Պապ Բագրատունուն։ Սակայն սա իր Պատմության հաջորդ 14-րդ գլխում Պապ Բագրատունու փոխարեն, խոսում է Սմբատ Բագրատունու մասին, որին Խոսրով 2-րդը մեծարում է, առատ պարգևատրում և նշանակում է Վրկանի մարզպան։[2]

Որպեսզի Սմբատ Բագրատունին արժանանար այդ բարձր պաշտոնին, նվերներին ու պատվին, նա պետք է, անշուշտ նախօրոք ցուցաբերած լիներ հավատարմություն և նվիրվածություն պարսից արքային։ Նրա այդ հավատարմությունը հավանորեն, հանդես պիտի դար Խոսրովի ծանր օրերին, և առաջին հերթին՝ Վնդոյի և Վստամի դեմ մղած կռիվներում, որին մասնակցում էին վերևում հիշատակված հայ իշխաններն իրենց զորքով։ Մինչդեռ, ինչպես տեսանք, պատմագիրն այդ կապակցությամբ հիշված հայ իշխանների մեջ հիշատակում է ոչ թե Սմբատ, այլ՝ Պապ Բագրատունի անունը։

Խոսրով 2-րդը այդ պատերազմներում ռեալ արդյունքի չի հասնում։ Դեռ ավելին, Վստամն ամրանալով Գիլանում և Պարթևաց կողմերում, սկսում է իր համար նոր զորք հավաքել։ Խոսրով 2-րդը Ասորեստան վերադառնալիս զորքի մի մասը թողնում է Վստամի դեմ գործելու։ Հավանորեն, Պապ Բագրատունին ևս Խոսրով 2-րդի այլ զորքերի հետ մնում է այդ կողմերում Վստամի և նրան միացող ապստամբների դեմ կռվելու համար։ Թերևս այդ պատճառով էլ Սեբեոսը, հիշատակելով բոլոր հայ իշխանների մահը, այլևս չի խոսում Պապ Բագրատունու մասին և հաջորդ 14-րդ գլխում սկսում է պատմել Վրկանի Մարզպանի մասին, որ ճնշում է Ամաղ, Ռոյեանի, Զրեճանի, Տարարստանի ապստամբությունները, իսկ այս ապստամբությունները կապված էին իհարկե Վնդոյի և Վստամի գործունեության հետ։

Արդ՝ ի՞նչ հիմք կա կարծելու, թե այդ Պապ Բագրատունին պետք է լինի հենց ինքը՝ Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին։

Նախ, ինչպես վերևում ասվեց, այն հայ իշխանները, որ Պապ Բագրատունու հետ միասին գտնվում էին պարսից պալատում, սպանվում կամ մահանում են։ Իսկ Ստեփանոս Սյունիի և Կոտիտ Ամատունու զորքերն ապրստամբում և գնում են Վստամին միանալու։ Այդ զորքերն ապստամբել էին իրենց իշխանների սպանության կապակցությամբ։ Ապստամբությունն ուղղված էր Խոսրով 2-րդի և այն իշխանի դեմ, որը հավատարմությամբ ծառայում էր

[1] Նույն տեղում, էջ 92—93։
[2] Նույն տեղում, էջ 94—95։

նրան և նրա կողմից նշանակվելու էր իշխաններից զրկված այդ զորքերի ղեկավար։ Այդ իշխանը, բնական է, որ լինելու էր Պապ Բագրատունին, որն իր զորքով նույն իշխանների հետ եկել էր պարսից պալատ և պատերազմ էր մղում ընդդեմ Վստամի, հավատարիմ մնալով Խոսրովին։

Պապ Բագրատունին հայոց այն «մեծամեծ իշխաններից» էր, որոնց համար Խոսրով 2-րդը հրամայում է— «պահել ի դրանն արքունի, կարգել նոցա ռոճիկս յարքունուստ տալ ի տունս իւրաքանչիւր, եւ կոչել յամենայն աւուր յընթրիս արքունի»։ Սակայն հետևյալ, 15-րդ գլխում, երբ Սեբեոսը պատմում է Վստամի ապստամբության մասին, հայտնում է, որ Ստեփանոս Սյունիի և Կոտիտ Ամատունու զորքերի ապստամբությունը (որոնք գնացել էին Վստամին միանալու) եղել է ընդդեմ Սմբատի— «Եւ արքն այնք հայաստանեայք՝ որ ապստամբեալ էին ի Սմբատայ և գնացեալք առ Վստամ»։[1] Սեբեոսի այս վկայությունը ռեալ հիմք է տալիս կարծելու, որ վերը հիշված Պապը և այստեղ հիշված Սմբատը նույն անձնավորությունն են. որը Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին է։

Սմբատ Բագրատունին Վրկանի մարզպան է մնում ութը տարի և վերադառնում է Հայաստան Խոսրով 2-րդի թագավորության 18-րդ տարում։[2]

Խոսրով 2-րդի թագավորության 18-րդ տարին անում է 608—9 թ.-ը։ Հետևապես, Սմբատ Բագրատունին Վրկանի մարզպան է եղել 601—608—9 թվերին։ Որպեսզի Սմբատ Բագրատունին արժանանար վստահության և բարձր պաշտոնի, նա առնվազն մի քանի տարի պետք է հավատարմությամբ ծառայած լիներ Խոսրով 2-րդին։ Նա կարող էր այդ հավատարմությունը ցուցաբերել հենց 597—601 թ. թ. ընկած ժամանակամիջոցին, Վստամի դեմ եղած կռիվներում, որտեղ նա մի շարք հաղթանակներ տանելով արժանացել է ուշադրության և հենց այդ ռազմական գործողությունների կողմերումն էլ նշանակվել մարզպան։

Մի այլ հանգամանք ևս կարող է կռվան ծառայել Պապի և Սմբատի միևնույն անձն լինելու հավանականությանը։

Պապ Բագրատունու հետ պարսից պալատումն էր գտնվում, ինչպես ասվեց, Ստեփանոս Սյունին, որը հետո սկսում է պայքարել իր հորեղբայր Սահակի դեմ՝ Սյունյաց իշխանության համար։ Այդ նշանակում է՝ Սյունյաց Ստեփանոս, Սահակ իշխանները ժամանակակից էին Պապ Բագրատունուն և գործում էին նրա հետ միասին։ Հայտնի է նաև, որ Ստեփանոսը Խոսրով 2-րդի հրամանով բանտարկվում և սպանվում է։ Իսկ թե Սյունյաց Սահակ իշխանն ինչ է լինում, Սեբեոսն այդ մասին չի խոսում։ Սյունյաց Սահակ իշխանի մասին հայտնում է Ստեփանոս Օրբելյանը։ Վերջինս խոսելով Սյունյաց իշխանների մասին, և այդ իշխաններին հականե անվանե հիշելով Բաբիկից սկսած, այսինքն Շապուհ 2-րդի թագավորության 68-րդ տարում (367 թ.) մինչև այդ Սահակ իշխանի հանդես գալը, ցույց է տալիս 232 տարի, և ասում է, որ Սահակը Սյունիքում իշխել է 10 տարի.[3] այսինքն, այդ անում է 599—609 թ. թ.։

[1] Նույն տեղում, էջ 97։ Այն հայերը, որոնք ապստամբել էին Սմբատի դեմ (Կոտիտ Ամատունու և Ստ. Սյունիի զորքերը), հետագայում, երբ Սմբատը պատերազմ է մղում Տաճարստանում և հաղթում թշնամիներին, Սմբատից ներում են խնդրում—«իսկ այնք, որ էին ընդ նոսա (այսինքն ապստամբ հայերը, ասես Սեբեոս—էջ 93, 97) խնդրեցին երդումն և պայման եւ եկին կացին առաջի Սմբատայ, եւ Յովսէփն (էջ 98—99) այն ընդ նոսա»։ էջ 100։

[2] Սեբեոս, էջ 101։

[3] Ստ. Օրբելեան—«Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1912 թ., էջ 52։

Ստ. Օրբելյանը այդ նույն Սահակ իշխանին դարձյալ հիշում է Դվինում Սմբատ Խոսրով-Շումի կողմից գումարված կաթողիկոսական ժողովի կապակցությամբ, որտեղ կաթողիկոս է ձեռնադրվում Աբրահամ Ռշտունին։[1] Այս նշանակում է Պապ Բագրատունու հետ հանդես եկող և գործող ժամանակակից իշխանները ժամանակակից են և գործում են նույն Վրկանի մարզպանի հետ։ Այս փաստը ևս հավանական է դարձնում այն, որ Վրկանի մարզպան Սմբատ Խոսրով-Շումը 596—7 թվերին պարսից պալատում հանդես եկած, և մեծամեծների շարքում հիշատակված (որոնց Խոսրով 2-րդը հրավիրում էր «Յամենայն աւուր յընթրիս արքունի») Պապ Բագրատունին է, այսինքն, Աշոտ Ասպետի որդին։ Իսկ ի՞նչպես կարող էր նույն իշխանը մի դեպքում կոչվել Պապ, մյուս դեպքում՝ Սմբատ։

Նախ պետք է ասել, որ Բագրատունիների մոտ ընդունված, սիրելի և գործածական էին Սմբատ, Բագարատ, Աշոտ, Սահակ անունները։ Այս անունների մեջ նրանք ամենից շատ գործածում էին Սմբատ անունը։ Երբեմն այնպես էր պատահում, որ Սմբատ էր կոչվում թե հայրը և թե որդին, օրինակ՝ Սմբատ Խոսրով-Շումի որդին նույնպես կոչվում էր Սմբատ։[2] Հովհ. կաթողիկոսը, 8-րդ դարի սկզբի մասին խոսելիս նույնպես հիշում է «Սմբատ որդի Սմբատայ»— «Զկնի սորա (Գր. Մամիկոնյան) պայազատէ զիշխանութիւնս հայոց Սմբատ Բագրատունի՝ որդի Սմբատայ»։[3]— «Ընդ նմին եւ զիշխանն հայոց զՍմբատ որդի Սմբատայ»։[4]

Երբեմն էլ նույն իշխանը (կամ թագավորը) այլ անուն ունենալով հանդերձ, իշխանության, պետական բարձր աստիճանի հասնելով, կարող էր կոչվել իր հոր, կամ իշխանական տոհմի, տան հիմնադրի անունով և պատմության մեջ հայտնի դառնալ այդ վերջին անունով։ Այսպես, օրինակ, Գագիկ առաջինի անդրանիկ որդու անունը Հովհաննես էր,[5] բայց նա հայտնի է իբրև Սմբատ (Սմբատ 3-րդ),— «Եւ պայազատեն զիշխանութիւնն որդիք նորա (Գագիկ առաջինի) Սմբատ՝ զոր Յովհաննէս կոչէին, եւ Աշոտ նորին հարազատն»,[6]— «Եւ տայ բաժին երկանուանն Սմբատայ՝ զամուրն Անի եւ որ շուրջ զնովաւ գաւառք, վասն անդրանկութեան»[7]

Ինչպես պարզվում է Վարդանի մեկ ակնարկից, Սմբատ առաջինը նույնպես երկու անուն է ունեցել։ Վարդանը նրան սկզբում հիշում է Պապ անունով, իսկ հետո՝ Սմբատ անունով— «այլ Աշոտ արքայ դնէ իշխան վրաց զքեռորդի և ինքն կատարի ի քրիստոս եօթանասուն եւ մի ամաց։ Եւ առնու զթագ նորա Պապ՝ որդի նորա, յերեք հարիւր քառասուն եւ չորս թուականին ամս քան եւ չորս կամակցութեամբ Լեւոնի՝ որդւոյ Վասլին... Իսկ Սմբատ առեալ զպատիժն՝ շինէ զսուրբ Փրկիչն յԵրազգաւորն, իր է Շիրիկաւան՝ որ օծաւն իսկ»։[8] Գագիկ առաջինը նույնպես ունեցել է երկու անուն՝ Գագիկ և Աշոտ։

---

[1] Նույն տեղում, էջ 100—101։
[2] Սեբեոս, էջ 221։
[3] Յովհ. կաթ. «Պատմ. Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 93։
[4] Նույն տեղում, էջ 94։
Ասողիկ, «Պատմութիւն», Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 278։
Արիստակես Լաստիվերտցի, «Պատմութիւն», Թիֆլիս, 1912 թ., էջ 9։
Նույն տեղում։
Վարդան, «Պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861 թ., էջ 117։
Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հատոր I, էջ 190, թիվ 55, «Աշոտ կոչվում է նաև Գագիկ Ա. թագավորը, որ գահակալեց 990—1020 թ.» տես «Շիրակ» 134 (Արձ.), տես նույնը էջ 433, թիվ 21, Գագիկ Ա. թագավորը կոչում է իրեն Աշոտ (Արձ. Շիրակ, 133—134)։

Սմբատ 3-րդի (Հովհաննես), Սմբատ առաջինի (Պապ), Գագիկ առաջինի (Աշոտ) երկու անուն ունենալը հիմք է տալիս կարծելու, որ Վրկանի Մարզպան Սմբատ Խոսրով-Շումը նույնպես կարող էր երկու անուն ունենալ— Սեբեոսի կողմից մեկ անգամ հիշատակվելով Պապ անունով, իսկ այնուհետև՝ Սմբատ անունով։

Առհասարակ պետք է նկատել, որ տվյալ տոհմում կամ իշխանական տանն ընդունված և սիրելի անունը գործածվում էր սերնդից-սերունդ, անցնում էր հորից որդուն։

Նույն երևույթը կարելի է նկատել հայ Բագրատունիների մոտ, որոնք իշխանության գլուխ կանգնելով սկսում են կոչվել իրենց տոհմում ընդունված և սիրված անունով՝ Սմբատ։ Այստեղից էլ հասկանալի է դառնում, թե ինչու Գագիկ առաջինի անդրանիկ որդին (Հովհաննես) կոչվում է Սմբատ (Սմբատ 3-րդ), Աշոտ առաջինի որդին կոչվում է Սմբատ (Սմբատ առաջին), ինչպես և հնարավոր է լինում հասկանալ Հովհ. կաթ.-ի և Սեբեոսի վկայությունները— «Սմբատ որդի Սմբատայ», և այլն։ Այստեղից էլ կարելի է անել հաստատ հետևություն, որ Սեբեոսի մոտ հիշատակվող Պապ Բագրատունին նույնպես ունեցել է երկու անուն (Պապ և Սմբատ) և երբ նա հասնում է պետական, ռազմական բարձր աստիճանի, սկսում է հայտնի դառնալ Սմբատ անունով։ Տոհմի (տան) մեծության պատճառով նույն ժամանակամիջոցում կարող էին գոյություն ունենալ Բագրատունի տանյակից ավելի իշխաններ (հորեղբոր որդիներ, թոռներ, ազգականներ և այլն), որոնցից մեկ երկուսն էլ կարող էին անմիջականորեն կրել Սմբատ անունը կամ մեծ իշխան դառնալով ստանալ այն (ինչպես տվյալ դեպքում՝ Մանվելի որդի Սմբատը), բայց այդ Սմբատ անունը դառնում էր հատուկ անուն տոհմի մեջ այն իշխանի համար, որը սկսում էր գերիշխանության հասնել ոչ միայն իր տոհմի ներսում, այլև՝ երկրում։ Ճիշտ այդպես, կարելի է ասել նույն տոհմի նկատմամբ՝ ասպետ կոչման կապակցությամբ։ Հայտնի է, որ Բագրատունի իշխանները կոչվում էին ասպետ։ Բայց ասպետ կոչվում էին ոչ բոլոր Բագրատունիները, այլ նա, որը հասնում էր պետական և ռազմական բարձր պաշտոնի և իր տոհմի նկատմամբ բռնում գերիշխող, հրամայող դիրք։ Այս կապակցությամբ պետք է ասել, որ Բագրատունի տոհմի մեջ ասպետն ուներ այնպիսի դիրք և ազդեցություն, ինչպես Սյունիքում, կամ մյուս իշխանական տներում ուներ տանուտերը, նահապետը և այլն։ Հայտնի է, որ բոլորը չէին կարող լինել տանուտեր։ Ըվ տանուտիրության պատիվը նվաճելու համար երբեմն նույն տոհմի մեջ առաջանում էին արյունահեղ ընդհարումներ և դավադրություններ (օր., Սյունիքում Վասակի և իր հորեղբոր միջև, Ստեփաննոսի և Սահակի միջև և այլն)։ Ինչպես տանուտերը հանդիսանում էր տվյալ տերիտորիայի, տոհմի բարձրագույն տերը, որին ենթակա էին տոհմի մյուս անդամները, նույնպես և Բագրատունիների մոտ՝ բարձրագույնն ասպետն էր, որին ենթակա էին Բագրատունի տոհմի մյուս անդամները։ Երբ Բագրատունիներից մեկը (կամ նրա որդին) հասնում էր ասպետության պատվին, այն ժամանակ նա կարող էր կրել իր տոհմի մեջ գործածվող և սիրելի անունն ու դրանով հայտնի դառնալ պատմության մեջ։ Երբեմն էլ, տվյալ Բագրատունի իշխանը պատմության մեջ սկսում է մնալ ոչ թե իր անունով, այլ՝ ուղղակի Ասպետ տիտղոսով (չնայած որ նա ունեցել է իր սեփական անունը), օրինակ՝ Փավստոսի վկայությամբ Մանվել Մամիկոնյանը Պապ թագավորի անչափահաս որդուն՝ Վաղարշակին

ամուսնացնում է զգուստր ասպետին Բագրատունւոյ ի Սակր գաւառէ։ Ինչպես նկատելի է, այստեղ Բագրատունի իշխանի իսկական անունը չի հիշատակվում։ Որովհետև այդ ասպետ կոչումը տվյալ անձի համար դառնում է հատուկ անվան համազոր։ Դեռ ավելին, ասպետ անունով սկսում է կոչվել ամբողջ Բագրատունի տոհմը — Ասպետ, Ասպետունի՝ (Բագրատունիի փոխարեն)։ Ն. Ադոնցը ցույց է տալիս, որ նույն ձևով սկզբնական տոհմային տերմին— Մամակ-ը հետագայում դառնում է հատուկ անուն ինչպես՝ Մամակ, Մամիկ, Մամիկոն-եան՝ (ինչպես ասպետ-ասպետունի) և այլն։ Մարկվարտը խոսելով 4-րդ—5-րդ դարերի Բագրատունիների մասին, ասում է— «քանի որ Բագարատով ցեղին անունն է որ կը կրկնուի միշտ, անձուկ առմամբ այս բոլոր իշխաններն ալ անանուն են»։

Մարկվարտը նկատում է, որ 4-րդ և 5-րդ դարերում Բագրատունի իշխանները հիշատակվում են գերազանցապես Բադարատ և Ասպետ անուններով։ Նա նկատում է նաև, որ այդ Բագարատը՝ Բագրատունյաց տոհմի հիմնադիրն է եղել, ուստի և, նրա, այդ հիմնադրի անունով՝ այն ժամանակ սկսում են կոչվել Բագրատունի իշխանները։ Բայց ահա հրապարակ է գալիս Բագրատունի իշխանի պատվերով գրած Մովսես Խորենացու Պատմությունը։ Մ. Խորենացին, որ Բագրատունյաց տոհմի փառաբանող պատմագիրն է, այդ տոհմի հիմնադիր, կամ նախահայր համարում է Սմբատին։ Կասկածից դուրս է, որ Խորենացու Պատմությունն ազդել է Բագրատունիների վրա և նրանք իրենց ձեռքի տակ ունենալով Խորենացու Պատմությունը, իրենց նախահոր անունը ըստ Խորենացու ճանաչելով Սմբատ, սկսել են այդ անունով կոչել իրենց տոհմի բարձրագույն իշխանին (ինչպես պարթևները կոչվում էին Արշակ)։ Այստեղից էլ հասկանալի է դառնում թե ինչու 6-րդ դարից սկսած ավելի քան գործածական է դառնում Սմբատ անունը,[1] որն անցնում է հորից որդի։

Պատմագիրների մոտ պահպանված Մանվել, Պապ, Հովհաննես, Վասակ, Մուշեղ և այլն անունները ցույց են տալիս, որ իրոք Բագրատունիները կրել են այդ անունները, բայց որոշ դիրքի և դրության հասնելուց հետո նրանք պատմության մեջ սկսել են հիշատակվել կամ իրենց կրած հատուկ տիտղո-

[1] Փաւստոս Բիւզանդ. «Պատմութիւն հայոց» Ե. գլ. ԽԴ։

[2] Ն. Ադոնց. „Армения в эпоху Юстиниана“. էջ 249, 287, 293, 417։ Ն. Ադոնցը քննելով ասպետ և սեպուհ տերմինները, և ցույց տալով, որ սեպուհ նշանակում է տոհմի որդի (իսկ ասպետ՝ տոհմապետ), ցույց է տալիս նաև, որ Ասպուրակ անունը առաջացել է սեպուհ բառից (էջ 401)։ Հետաքրքրական է նկատել, որ Աշոտ Ջ-ը (Աշոտ Երկաթ), երբ սկսում է կոչվել Շահնշահ (որն հետագայում սկսում են կրել Բագրատունի թագավորները), նրա այս տիտղոսը սկսում է համազոր դառնալ իր Աշոտ անվանը։ ուստի պատմագիրը՝ Հովհ. կաթ.-ը երբեմն նրան հիշում է ոչ թե Աշոտ անունով այլ՝ Շահնշահ—«Վազգագակի ապա պանակքն գգացուցին Շահանշահին» (էջ 317) -«Յետ այսոր եղելոց և գործելոց իրաց՝ դարձեալ անտի Շահանշահ կոչեցեալ գայ հասանել յԱնի գաւառ» (նույն տեղում, էջ 318, նաև 334, 356 և այլն)։ Իսկ Զաքարյանների ժամանակ այս Շահանշահը դառնում է անձնանուն որով պատմության մեջ հայտնի է Զաքարեի որդին՝ Շահանշահը (Կիրակոս Գանձակեցի Թիֆլիս, 1909 թ էջ 92, 239, 240 և այլն)։

Н. Адонц. „Армения в эпоху Юстиниана“, СПб. 1903 г., стр 402.

[3] Մարկվարտ, «Վրական Բագրատունյաց ծագումը» «Հանդէս ամսօրեայ» 1912 թ էջ 333։

[4] Ն. Ադոնցը քննելով Ասպետ, սեպուհ, Վասակ, վասակ (վասակ ձևից) տերմինները փորձում է բացատրել նաև Սմբատ (Սմ պատ) անունը։—«Если допустить существование vidyamata-рай, то к нему можно возвести излюбленное у армянов имя Սմ պատ из i-sempat». Տես „Армения в эпоху Юстиниана“, стр. 402, прим. 1.

ով (Ասպետ), կամ նախահոր անունով (Սմբատ— բստ Եսրենացու), և հայտնի են դարձել իբրև երկու անուն ունեցողներ։ Իսկ երբ պատահում էր, որ տվյալ իշխանը կրում էր նույն տոհմում ընդունված և գործածվող Սահակ, Աշոտ, Բագարատ (Բագրատ) անունը և հասնում էր բարձր դիրքի, նա այդ անունով էլ մնում էր պատմության մեջ։ Առհասարակ պետք է նկատել, որ Բագրատունիները անունների գործածության մեջ հանդես են բերել բծախնդրություն։ Սեբեոսը, որ Բագրատունյաց եպիսկոպոսն էր և նույն տոհմի պատմագիրը, նույնքան բծախնդիր պետք է լիներ Բագրատունի անունների գործածման մեջ և նրա կողմից այդքան սիրված ու փառաբանված անձը՝ Վրկանի մարզպանը չէր կարող նրա կողմից մինչև վերջ կոչվել Բագրատունի տան ոչ հատուկ՝ Պապ անունով։ Պապ անվան կապակցությամբ կարելի է ասել հետևյալը— «Պապ» բառը, որ փոխառյալ է պլհ. pap ձևից.[1] նշանակում է «մեծ հայր»— որը papak «հայրիկ» ձևով գործածվում է իբրև հատուկ անուն։

Պապ անունը հայ թագավորական և իշխանական տներում համեմատած մյուս անունների հետ, ավելի քիչ է գործածվել։ Պապ անունը կրել են Արշակունի թագավորներից՝ Արշակ 2-րդի որդին (Պապ թագավորը), Գրիգոր Լուսավորչի սերնդից՝ Հուսիկի որդին (Ներսես Մեծի հորեղբայրը)։ Աղվանքում Պապ անունը մի անգամ հիշում է Մ. Կաղանկատվացին «Պապ ի Հրահատեան»,- Ղ. Փարպեցին հիշում է Պապ Արտակունի— «Առաքէր զ Պապ Արտակունեաց, զայր ոստանիկ, որդի Բարոցի»։[3] Քանի որ pap ունի «մեծ հայր»— Պապ իմաստը,[4] ուստի և այդ անունը կրող իշխանի տոհմի եպիսկոպոսը (Սեբեոսը) կարող էր հետագայում «մկրտել» և հիշել տոհմի նախահոր, կամ նրա մեծ հոր (Պապի) անունով՝ Սմբատ— «զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատանեայ կոչեն»։[5]

* *

Վերևում հիշատակված և քննության առնված փաստերն ու դեպքերը համոզում են, որ Վրկանի մարզպան Սմբատը և Պապ Բագրատունին նույն անձն են, ուստի և կարելի է ասել, որ Վրկանի մարզպան Սմբատը՝ Աշոտ ասպետի որդին է։ Ակադ. Հ. Աճառյանն իր «Հայոց անձնանունների բառարանի» առաջին հատորում 6-րդ դարի համար հիշատակում է— «Աշոտ իշխան, որդի Սմբատի, տեր Բագրեվանդի և Արշարունյաց... (շուրջ 550)»։[6]

«Աշոտ ի Վարազտիրոցեան իշխան անգամ Դուինի Բ ժողովի 554 թ.»։[7]

«Աշոտ Բագրատունի իշխան, որ շինեց այգի անունով մի հյուրանոց և նվիրեց Գտկոյ վանքին (574 թ.-ից հետո)»։[8] Ակինյանը Պապ Բագրատունու

---

[1] Հ. Աճառյան, «Հայերեն արմատական բառարան», հատոր Ե, էջ 842։

[2] Մ. Կաղանկատվացի, «Պատմութիւն Ազուանից աշխարհի», Թիֆլիս, 1913 թ., էջ 348։
Ղ. Փարպեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 284—285։

[4] Առհասարակ պետք է նկատել, որ ժողովրդի մոտ մինչև որս էլ պահպանված է և նկատվում է մի սովորություն, երբ տվյալ տան մեջ որևէ մեկը (հայրը, որդին և այլն) կրում է իր մեծ հոր (պապի) անունը, նրան սովորաբար կոչում են Պապ։ Թերևս այս ձևով են առաջացել հետագայում այնքան շատ տարածված Պապ, Պապիկ (Պապյան, Պապիկյան), հայրիկ անունները։

[5] Մ. Խորենացի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913 թ., էջ 69։

[6] Հ. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», հատոր Ա, էջ 180։

[7] Նույն տեղում։

[8] Նույն տեղում։

հայր համարում է 554 թ.-ին Դվինի ժողովին մասնակցող «ի Վարազտիրոցեան» Ա(ր)շոտին։[1]

Իսկ Վրկանի մարզպան Սմբատ Խոսրով-Շումին համարելով Պապի որդին, կազմել է Բագրատունիների ճյուղագրությունը, որն ունի հետևյալ պատկերը.[2]

Վարազտիրոց Ը.
|
Աշոտ ասպետ Ա. 554
|
Պապ 601
|
Սմբատ Ա. Վրկան մարզպան
|
Վարազտիրոց Գ. տոհմ — Վարազսահակ Ը

և այլն։ Իսկ Մարկվարտը, որ Բագրատունյաց բուն ճյուղագրությունը սկսում է 6-րդ դարի վերջից, Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունիին համարելով Մանվելի որդին,[3] մի կողմ (առանձին) դասավորելով Աշոտ ասպետի և նրա որդի Պապին, տալիս է հետևյալ ճյուղագրական տախտակը.[4]

Մանուել — Աշոտ (Ա) ասպետ
|
Սմբատ Ա Բագրատունի, Խոսրով—Շնուն — Պապ 594/595
|
Կ Շնուն Վրկանից մարզպան + 616/17
|
Վարազտիրոց Ա. Ջավիտեան Խոսրով — Վարազ Սահակ

Բայց քանի որ վերևում քննության առնված փաստերը ցույց են տալիս, որ Վրկանի մարզպան Սմբատ Բագրատունին նույն Պապ Բագրատունին է, հետևապես՝ Աշոտ ասպետի որդին է (իսկ Աշոտ ասպետը հավանաբար 550 թ. թ. հիշվող Սմբատի որդին է), ուստի Բագրատունիների ճյուղագրական տախտակը տվյալ դեպքում կստանա հետևյալ պատկերը.

Սմբատ (շուրջ 550 թ. թ.)
|
Աշոտ ասպետ (ըստ Ալիշանի + 592 թ.) — Մանուել
|
Սմբատ (Պապ) Վրկանի մարզպան + 618/19 թ. — Սմբատ (աքսորված Աֆրիկա)։
|
Վարազտիրոց՝ — Վարազ Սահակ և այլն։

[1] «Հանդէս Ամսօրեայ», 1930 թ., էջ 639։ Ըստ Ալիշանի, Աշոտ Ասպետն ապրել է մինչև 592 թ.-ը (տես «Շիրակ» Բագրատ. առհմածառը)։

[2] Ն. Ակինյանի ճյուղագրական տախտակից (տոհմածառից) վերցված է այն տոտվածը, որը վերաբերում է քննվող նյութին։

[3] Ն. Ադոնցը Սեբեոսի մոտ հիշատակվող նախարարական անունները քննելիս հիշատակվող Սմբատ որդի Մանվելի, Պապ որդի Աշոտայ ասպետի, Սմբատ մարզպան Վրկանայ—դիտում է իբրև առանձին իշխանների անուններ (տես „Армения в эпоху Юстиниана", էջ 248), այսինքն Ադոնցը նույնպես ընդունում է, որ Մանվելի որդի Սմբատը և Վրկանի մարզպան Սմբատը տարբեր անձնավորություններ են։

[4] «Հանդէս ամսօրեայ», 1912 թ., էջ 335—336։

*

Այսպիսով, համաձայն լինելով Ք. Պատկանյանի, Ստ. Մալխասյանի հետ, որ 6-րդ դարի վերջում և 7-րդ դարի սկզբում գործում էին երկու Սմբատ Բագրատունիներ, որոնցից մեկը՝ Մանվելի որդին բյուզանդական կայսրի կողմից աքսորվում է Աֆրիկա, իսկ մյուսը՝ պարսից պալատում հասնում է բարձր պաշտոնների ու շնորհների, և գտնելով, որ վերջինս Պապ Բագրատունին է, այսինքն՝ Աշոտ ասպետի որդին, պետք է անջատել վերջինիս անձի հետ կապված պատմությունը Մանվելի որդու պատմությունից ու տալ նրա համառոտ ամփոփ պատմությունը։

Վրկանի մարզպան Սմբատ (Պապ) Բագրատունին 596—97 թվին մյուս հայ իշխանների հետ (տես վերևում) ներկայանում է Խոսրով 2-րդի պալատը։ Նա (ինչպես և մյուս իշխանները) մեծարվում է Խոսրով 2-րդի կողմից։ Հայ իշխանները Խոսրով 2-րդի հետ միասին իրենց զորքով սկսում են պատերազմներ մղել Վնդոյի և Վստամի դեմ։ Այդ կռիվները լինում են 597—601 թվերին։ Հայ իշխաններից մի քանիսը մեռնում են իրենց բնական մահով, իսկ Ստ. Սյունին և Կոտիտ Ամատունին սպանվում են պարսիկների ձեռքով։

Այս բոլոր իշխանների զորքերը, որ գտնվում էին Սպահանում, հանձնվում են Սմբատ (Պապ) Բագրատունուն։ Կոտիտ Ամատունու և Ստեփանոս Սյունիի զորքերն ապստամբելով Սմբատի ու պարսիկների դեմ, գնում են միանալու Գիլանում և Պարթևաց կողմերում գործող Վստամին։ Սմբատ Բագրատունին հավատարմությամբ ծառայելով Խոսրով 2-րդին, պատերազմներ մղելով նրա թշնամիների դեմ (Վնդոյի և Վստամի) արժանանում է բարձր պարգևների և պատիվների, և 601 թվին նշանակվում է Վրկանի մարզպան— «Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ հաճոյանալ Սմբատայ Բագրատունւոյ յաչս Խոսրովու արքային. տայ ի նա զմարզպանութիւն երկրին Վրկանայ, առնէ զնա իշխան եւ ի վերայ ամենայն կողմանն այնորիկ, առաւել մեծացուցանէ պատուովք եւ իշխանութեամբ. լնու զնա ոսկւով եւ արծաթով, զարդարէ ի հանդերձս պատուականս եւ յերեւելիս։ Տայ նմա զկամարն եւ զսուսերն լեալ հայր իւրոյ Որմզդի. գումարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկս եւ զհայաստանեայս. հրամայէ գնալ յերկիր իշխանութեանն իւրոյ»։[1]

Այդ ժամանակ Խոսրով 2-րդի դեմ ապստամբել էին Ամադ, Ռուեան, Զրեճան, Տապարաստան գավառները։[2] Սմբատ Բագրատունին այս ապստամբությունները ճնշում և երկրում վերականգնում է կարգը։ Նա այդ կողմերում (Թուրքեստան) հանդիպում է հայերի (որոնց ավելի վաղ շրջանում գերեվարել և բնակեցրել էին այդ կողմերում), որոնք մոռացել էին մայրենի լեզուն, գիրն ու գրականությունը։[3] Նա, Սմբատ Բագրատունին, վերականգնում է այդտեղի հայերի համար եկեղեց. կարգը, հաստատում է նրանց համար եպիսկոպոս (Հարել անունով), զբաղվում է դպրոցների բացման և մայրենի լեզվով գիր ու գրականություն տարածելու գործով։

Սմբատ Բագրատունին՝ ճնշելով բոլոր խռովություններն ու ապստամբությունները, երկրում վերականգնելով կարգը. այնտեղ մարզպան է մնում ութ տարի (601—608)։ Այս կապակցությամբ պարսից արքան նրան նոր նվերներ

---

[1] Սեբեոս, էջ 94։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 93։ Տես նաև Յովհան. կաթ., էջ 69—70, Վարդան, էջ 84։

ու բարձր պատիվներ է տալիս— «պատուով մեծացուցանէ ի վեր քան զամենայն մարզպանս իւրոյ աշխարհին առնելով, եւ զամենայն անուանս մատուցանէ առաջի նմա ոսկի, եւ հանդերձս թագաւորականս, արտախուրակս ոսկեզարդս եւ զանգապանակ ակամբք եւ մարգարտովք կարգեալս»[1] Սմբատի որդին. Վարազտիրոցը նույնպես արժանանում է բարձր պատիվների[2]:

Սմբատ Բագրատունին ութը տարի մարզպան մնալուց հետո վերադառնում է Հայաստան (603—9 թ.) և Դվինում շինում է Ս. Գրիգորի անվան եկեղեցին: Թե որքան մեծ հեղինակություն և դիրք ուներ Սմբատ Բագրատունին պարսից պալատում, այդ երևում է հետևյալից,— երբ Դվինում կառուցում են եկեղեցի, Դվինի պարսիկ բերդապահը բողոքում է, թե եկեղեցին մոտ է բերդին և խանգարում է: Այն ժամանակ Խոսրով 2-րդը հրամայում է քանդել բերդը և շինել եկեղեցին.[3] Սմբատ Բագրատունին Խոսրով 2-րդից խնդրում է Հայաստանում կաթողիկոս ձեռնադրելու թույլտվություն: Խոսրով 2-րդը դրան էլ ընդառաջում է. Հայաստանում կաթողիկոս է ձեռնադրվում Աբրահամ Ռշտունեցին:

Հայաստանում գործերը կարգի բերելուց հետո, նա նորից հրավիրվում է պարսից պալատ, որտեղ արժանանում է նոր, բարձր պատիվների, և կոչվում է Խոսրով-Շում:[5] Ապա ուղարկվում է Արևելք՝ քուշանների դեմ, հաղթում է քուշաններին, որոնց թագավորին սպանում է մենամարտի մեջ:[6] Սմբատ Բագրատունին այս պատերազմից հաղթանակով վերադառնալով մեծ շքով ու հանդեսներով ընդունվում է Խոսրով 2-րդի պալատում: Նա արժանանում է մի նոր փառքի՝ Խոսրով 2-րդի պալատում ստանում է 3-րդ նախարարի դահը: Փառքի և հզորության այս բարձրության վրա մնում է մինչև իր մահը, որ տեղի է ունենում Խոսրով 2-րդի թագավորության 28 տարում, այսինքն 618—19 թվին: Նրա մարմինը բերում և թաղում են Կոգովիտ գավառի Դարույնքում:[7]

1 Սեբեոս, էջ 101.

2 Նույն տեղում.

3 Նույն տեղում, էջ 102.

4 Նույն տեղում.

5 Նույն տեղում, էջ 103. «Խոսրով Շում» բացատրվում է որպես «[illegible]» կամ դրոշմ Խոսրովի». տես Սեբեոսի Պատմության 324 էջի ծանոթությունը:

6 Նույն տեղում, էջ 107.

7 Նույն տեղում, էջ 106.